

ԹՌՈՒԹԻԱՅԻ ԴԻՐՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՂ ԶՈՐՔԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ՔԵԼԲԱԶԱՐԻ ՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ\*

Լուսինե Քերյան

Բանալի բառեր՝ Թուրքիա, Հայաստան, Աղրբեջան, Քելբազար, հայ-թուրքական հարաբերություններ, դարաբաղյան հիմնահարց

Անվտանգության գոտի ստեղծելու նպատակով ԼՂ պաշտպանության բանակի գործերը 1993թ-ի ապրիլի սկզբներին ազատազրեցին Քելբազարի շրջանը: Դարաբաղյան հակամարտության սկզբից ի վեր Թուրքիան այն որակեց որպես Հայաստան-Աղրբեջան հակամարտություն՝ չճանաչելով ԼՂ-ը որպես հակամարտության կողմ: Այս հանգամանքով է պատճառաբանված Քելբազարի գործողությունից հետո Թուրքիայի դիրքորոշման կտրուկ փոփոխությունը << Անկատմամբ: 1993 թվականի մարտի վերջին և ապրիլի սկզբին հակամարտության գոտում տեղի ունեցած իրադարձությունները մի նոր շրջադարձ նշանավորեցին հայ-թուրքական հարաբերություններում: Ի պատասխան Լեռնային Դարաբաղի ուժերի կողմից Քելբազարի գրավմանը՝ Անկարան անմիջապես մի շարք քայլեր ծերնարկեց: Ապրիլի 7-ին և 8-ին նախազահ Թուրքութ Օզալը և վարչապետ Սուլեյման Ղեմիրեկը հանդես եկան Հայաստանը դատապարտող հայտարարություններով: Ստեղծված իրավիճակում տեղի ունեցավ Թուրքիայի Անվտանգության խորհրդի նիստ, որը քննարկեց Հայաստանի նկատմամբ Թուրքիայի կողմից իրականացվելիք պատճամիցոցները: Ապրիլի 3-ից սկսեց կիրարվել Թուրքիայի տարածքով Հայաստանին միջազգային մարդասիրական օգնության առաքումը դադարեցնելու մասին որոշումը, որով նախատեսված էր՝

1. փակել օդային և ցանաքային տարածքը Հայաստան օգնություն տանող փոխադարձությունների համար.
2. ստիպել վայրէջք կատարել Հայաստան թռչող այն ինքնաթիռներին, որոնք առանց նախազգուշացման մտնում են թուրքական օդային տարածք:
3. ետ Վերադարձնել Ֆրանսիայից ուղարկված այն բեռնատար գնացքը, որը Հայաստան էր տանում 300 տոննա օգնություն [1]:

Նոյն ժամանակահատվածում Երևանի և Գյումրիի ուղղություններով գործերի և տեխնիկայի կուտակումներ սկսվեցին հագիրում և Արյաքոյում: Ապրիլի 8-ին, «Հյուրիյեթ» թերթի վկայությամբ, թուրքական երրորդ բանակը բերվեց ռազմական պատրաստության վիճակի և դիրքեր գրանցեց << հետ սահմանի վրա: Համաձայն թերթի՝ այդ ստորաբաժանումները պատրաստ էին 24 ժամվա ընթացքում մարտական առաջադրանքներ կատարել: Թուրքական մի շարք խոշոր կուսակցությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ՝ Նեղմներին Էրբաքան (Բարօրության կուսակցություն), Բյուլենթ Էնզկիթ (Դեմոկրատական ծախս կուսակցություն) և Քամրան Ինանը («Սայր Հայրենօք» կուսակցություն) իրենց կուսակցությունների անունից պահանջեցին ռազմական միջամտություն ծերնարկել Հայաստանի դեմ [2]: Մամուլում սկսվեց հղոր հակահայկա-

\* Հոդվածն ընդունվել է 01.02.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

կան արշավանք, Թուրքիայի խոշոր քաղաքներում տեղի ունեցան «հայկական ազրեսիան» դատապարտող միտինգներ և հանրահավաքներ:

Աշխոյթ գործունեություն ծավալվեց դիվանագիտական ասպարեզում: Համաձայն Բաքվի խնդրանքների Երկրորդ և Երրորդ կետերի[3]՝ Թուրքիան պետք է ջանքեր գործադրեր, որպեսզի մյուս Երկրները նույնպես դադարեցնեն օգնություն ցուցաբերել Հայաստանին և պետք է դիմեր ՄԱԿ՝ ՀՀ նկատմամբ միջազգային պատժամիջոցներ կիրարելու նպատակով: Ապրիլի 3-ին ժննում կայացավ Ղարաբաղին նվիրված ոչ պաշտոնական խորհրդակցության Երրորդ փուլի նիստը, որին մասնակցում էին Թուրքիայի, ԱՄՆ-ի, ՌԴ, Ադրբեյջանի և Հայաստանի պատվիրակությունները: Խորհրդատվությունը որևէ արդյունք չտվեց:

Ապրիլի 5-ին Թուրքիայի պահանջով հրավիրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստ, որի ժամանակ Թուրքիան պահանջեց դատապարտել Հայաստանի ազրեսիան և պատժամիջոցներ կիրարել վերջինիս նկատմամբ: Անվտանգության խորհրդի ընդունած համար 822 բանաձնում ՌԴ և Ֆրանսիայի ճնշման ներքո օգտագործվեց «ստեղական հայկական ուժեր» արտահայտությունը, ինչը հրավականորեն բացառում էր ՀՀ պատասխանատվությունը: Չանցավ նաև ՀՀ նկատմամբ պատժամիջոցներ կիրարելու Անկարայի առաջարկը:

Թուրքիան հաջողության հասավ միայն հայամական Կոնֆերանս կազմակերպության նախագահությունում, որը դատապարտեց Հայաստանի Հանրապետությանը՝ «Ադրբեյջանի նեմ ազրեսիա» սանձագերծելու համար: Սակայն այդ կազմակերպությունը ոչ մի քաղաքական կամ տնտեսական լծակ չուներ հրադարձությունների վրա ազդելու համար և վերջինիս հայտարարությունը գուտ դեկարտիկ բնույթ ուներ:

Ընդհանուր առմամբ թուրքական հակաքայլերը որևէ որական արդյունք չտվեցին: Էերնային Ղարաբաղը որպես հակամարտության կողմ չշանաչելով և Հայաստանի վրա ճնշում գործադրելով՝ Անկարան չկարողացավ կանգնեցնել արյունահեղությունը: Ղարաբաղը ինքնուրույն գործոն էր, և թուրքական կողմը հնարավորություն չունեցավ միջազգային օրենքների ներքո ազդելու վերջինիս գործողությունների վրա: Ադրբեյջանի բոլոր փորձերը Հայաստանը պատերազմի մեջ ներքաշելու ուղղությամբ (հատկապես Նախիջևանի կողմից ձեռնարկված սադրիչ գործողությունները) ապարդյուն եղան: Անկարայի Նախիջևանի նկատմամբ ունեցած նախկին ծրագրերը հանդիպեցին Ուսաստանի հակագդեցությանը: Թուրքական մամուլին տված իր հարցազրույցում Անկարայի յում ՌԴ դեսպան Ալբերտ Չերնիշովը այս կապակցությամբ նշեց, որ «Նախիջևանը Ադրբեյջանի երաշխակայության տակ է, և որևէ կողմ չպետք է միջամտի»[4]: Ավելին՝ դեսպանը նշել էր, որ խորհրդային Ուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված Մուկուսական պայմանագրերով ոչ Թուրքիան և ոչ էլ Ուսաստանը Նախիջևանի հարցում երաշխավորի հրավունք չունեն, այլ պայմանավորվածության են եկել միայն սահմանների դեմարկացիայի խնդրում[5]: Այսինքն, համաձայն ռուս դեսպանի, Թուրքիան չուներ միջազգային հրավական որևէ պարտավորություն Նախիջևանի նկատմամբ:

Թուրքիայի կողմից Հայաստանի նկատմամբ կիրարած բոյկոտը (այլ կերպ ուա չի կարելի անկանել) հարցականի տակ դրեց Անկարայի միջնորդությունը, որի հրագործումը բարդությունների հանդիպեց դեռևս մինչև Քելբաջարի ազատագրումը: Անկարայի այդ դիրքորոշումը մասսամբ կարելի է բացատրել ընդդիմության և նախագահ Օզալի ռազմաշունչ կեցվածքով, ինչպես նաև հասարակական կարժիքի ազդեցությամբ, որը դեռևս 1992թ-ի մարտից պահանջում էր փակել Երկաթուղին և ավելի գործուն քայլեր ձեռնարկել Հայաստանի նկատմամբ:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Հայ-թուրքական հետագա հարաբերությունների գործընթացի վրա թէ շատ ազդեցին երկու՝ ժամանակագրական առումով համընկնող հանգամանք. ապրի 17-ին սրտի կաթածից մահացավ Թուրքիայի նախագահ Թ.Օզալը, և հունիսին նոր նախագահ դարձավ ավելի շրջահայց և իրատես Սուլեյման Ղեմիրեկը, և երկրորդ՝ հունիսին հրատարձությունները Աղրբեջանում: Ղարաբաղյան ճակատներում Բաքվի կրած անհաջողությունները պատճառ դարձան Աղրբեջանի ներքարաքական հրավիճակի սրման: 1993թ.հունիսի 4-ին Գյանջայում բարձրացավ Սուրեթ Հուսեյնովի խռովությունը, որը բերեց Էլչիբեյի թուրքամետ վարչակարգի տապալմանը և իշխանությունը անցավ Նախիջևանի նախկին ղեկավար Հեյդար Ալիևի ծեռքը: Ղերևան 1993թ.-ի հունիսի 11-ին Աղրբեջանի նավթի որոնման, արդյունահանման և վաճառքի հրականացումը ապահովելու համար ստեղծվեց մի կոմսորցիում, որի մեջ մտան անզիհական, նորվեգական և ամերիկյան ընկերությունները և աղրբեջանական Սուլար նավթային ընկերությունը[6]: Այս պայմանագրով վարչական ստորագրեր, որով հնարավոր Կուրանար նավթը Թուրքիայով միջազգային շուկա արտահանելը: Իշխանությունը ստանձնած Ալիևը, համաձայն «Սարահ»-ի, ծգուում էր ամրապնդելու Աղրբեջանի դիրքերը նավթային գործարքներում[7]: Ալիևի նպատակն էր օգտագործել նավթի խաղաքարտը Ռուսաստանի և Արևմուտքի հետ հարաբերություններում՝ իրեւ մի լծակ դարձայան խնդրի լուծման համար:

Թուրքիայի հետ մերձեցման կողմնակից Արուֆազ Էլչիբեյի տապալումը դարձնությամբ ընդունվեց Անկարայում: Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացման կողմնակից Ալիևի իշխանության գալը Թուրքիայում պատճառ հանդիսացավ նախկինում վարած քաղաքականության վերաբռնման փորձերի: Այս տեսանկյունից արծարծվեց նաև Հայաստանի նկատմամբ վարչական քաղաքականության արդյունավելության խնդիրը: «Սիլլիյեթ»-ի այն հարցին, թէ արդյո՞ք Հայաստանի նկատմամբ սիսալ քաղաքականություն չի վարկել, Թուրքիայի ԱԳ նախարար Չեթինը պատասխանեց. «...ի վնաս Աղրբեջանի ոչ մի քայլ չի արկել: Քաղաքականությունն իրագործվում է Աղրբեջանում: Ել ի՞նչ կարող էր անել Թուրքիան: Չեթինը կարող գնալ ռազմաճակատ ու կրվել»[8]: «Զումհուրիյեթ» թերթը հունիսի 5-ի իր համարում նշում է. «Անկարայի սիսալը (արտաքին քաղաքականության ասպարեզում) կայանում էր գուցե նրանում, որ նա հաշվի չստեց Ռուսաստանի ավանդական քաղաքականության փաստի հետ և չափից ավելի շտապողականություն ցուցաբերեց: Անկարայի երկրորդ սիսալ՝ Հայաստանի ղեմ պայքարում Աղրբեջանին վճռական օժանդակություն ցույց տալն էր»[9]: Այսինքն՝ Թուրքիան չկարողացավ պահպանել Էլչիբեյին:

Թերբաջարդ կորցնելու արդյունքում Աղրբեջանում առաջացած ներքին խնդրումներն ստիպեցին Թուրքիային վերսկսելու երկխոսության փորձերը Հայաստանի հետ: Ռազմական գործողությունների դադարեցումը Ղարաբաղում, ինչպես նաև փոխգիծումային մոտեցումները Թերբաջարի հարցում (ապահօնմականացված գոտի) կարող էին կասեցնել քացասական գործընթացների զարգացումը Աղրբեջանում:

Հունիսի 18-ին ՀՀ ԱԳ նախարար Վ.Փախազյանը ժամանեց Ստամբուլ Սևծովյան Տնտեսական Համագործակցության երկրների արտգործնախարարների նիստին մասնակցելու համար: Թուրքական մամուլին տված հարցագրույցում նախարարը, անդրադարձալով հայ-թուրքական հարաբերություններին, մասնավորապես նշեց, որ վերջին մեկ ամսվա ընթացքում (մայիսի երկրորդ կեսից հունիսի երկրորդ կեսը) Թուրքիայի դիրքորոշման մեջ նկատվում է հավասարակշռման միտում: Նախարարը նշեց, որ այդ պահին լավ կապեր գոյություն ունեն թուրքական կառավարության հետ և որ մշտական հեռախոսային կապ կա իր և Չեթինի միջև[10]:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Միաժամանակ այդ ժամանակաշրջանի թուրքական մամուլը բարձր գնահատեց *L.Տեր-Պետրոսյանի* զանքերը՝ ԵԱՀՆ շրջանակներում Մինսկի խմբի զինադադարի հաստատման ծրագրի վերաբերյալ և ՀՀ ղեկավարության հետ համաձայնության հասնելու ուղղությամբ: «Միլլիյեթ» թերթը նշեց, որ «Լեռնային Ղարաբաղում խաղաղության ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստանի և Թուրքիայի միջև խաղաղության (ծրագրերի) կամուրջների ստեղծմանը»[1]: Ակտիվ շփումները կողմերի միջև շարունակվեցին մինչև հունիսի վերջ: *Տեղի* ունեցավ խորհրդարանի նախագահ *Բ.Արարոցյանի* հանդիպումը *Ս.Ղենջիբեկի* հետ, որի ընթացքում արծարծվեցին Ղարաբաղի խնդրի կարգավորմանը վերաբերող մի շարք հարցեր: Հունիսի 25-ին *Ժ.Լիպարիտյան-Չեթին* հեռախոսագրույցի ընթացքում քննարկվեց ՀՀ-ի գորքերի թելքաջարից հանելու և այնտեղ ապառագմակնացված գոտի ստեղծելու հարցը:

Սակայն *Աղրբեջանի* նոր ղեկավարությունը շրջադարձ կատարեց ղեայի Ռուսաստան: Հունիսի վերջերից սկսած Թուրքիայում հանգում են այն եզրակացության, որ *Աղրբեջանը* այլևս դուրս է գտնվում *Անկարայի* ազդեցության ոլորտից: Բարուն վերանայեց Արևմուտքի հետ կնքած նավթային պայմանագրերը և հրաժարվեց նավթամույի՝ Հայաստանով անցնող տարբերակից[12]: Հուլիսի 5-ին «Միլլիյեթ»-ը, վկայակոչելով հավաստի աղբյուրներ, նշեց, որ մոտ օրերին *Արևին* ու Հուսեյնովը բանակցություններ պետք է սկսեն ռուսների հետ՝ *Աղրբեջանի* «ՊԴԿ անդամակցության հարցի շուրջ»[13]:

Աղրբեջանի դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ այն պայմաններում, երբ Հայաստանը, համաձայն հուլիսի սկզբում գերմանական «Focus» շաբաթաթերում լուս տեսած *Ժ.Լիպարիտյանի* արտահայտության՝ «...ռուսական դիրքորոշումից բացի այլն տրանք չուներ», Թուրքիային դուրս էր թողում Անդրկովկասյան տարածաշրջանի քաղաքական ասավարեզից: Հուլիսին Թուրքական կողմը դիմեց խարեւոյքան: Հուլիսի 13-ին *ՀԱԳՆ-ը Մուսկվայում* Թուրքիայի դեսպանությունից ստացավ նոտա, որով վերջինս տեղեկացնում էր հուլիսի 7-ին Մուսկվայում կայացած Սևծովյան Տնտեսական Համագործակցության երկրների զագաթաժողովում իր բոլոր մասնակիցների ընդհանուր համաձայնությամբ ընդունված հայտարարության մասին, որով նրանք «դատապարտում են Հայաստանի ազրեսիան *Աղրբեջանի* դեմ»: *ՀՀ ԱԳՆ-ը* կապվեց այդ կազմակերպության մի շարք անդամ երկրների *ԱԳ նախարարությունների* հետ և փորձեց պարզել նմանօրինակ հայտարարությանը նրանց համաձայնելու դրդապատճառները: Պարզվեց, որ այդպիսի հայտարարություն ընդհանրապես չի ընդունվել: Հայկական կողմը հուլիսի 26-ին նոտա հղեց Մուսկվայում թուրքական դեսպանություն՝ դատապարտութելով խարեւոյքունը և տարակուսանը արտահայտելով տնտեսական համագործակցության նպատակով ստեղծված կազմակերպությանը քաղաքական քննության հայտարարություններ պարտադիրելու Թուրքիայի գգուումների կապակցությամբ[14]:

Թուրքիան ստիպված եղավ շիման եզրեր փնտրելու Աղրբեջանի նոր ղեկավարության հետ՝ գոնե ինչ-որ չափով՝ Ռուսաստանի աճող ազդեցությունը հավասարակշռելու համար: Թուրքիային անհրաժեշտ էր փոխել իր իսկ ձեռքբերով կերտված *Արևին* բացասական իմիջը և լեզիտիմության տեսք տալ նոր իշխանությանը: Արևինի ուղղված նամակում Թուրքիայի *ԱԳՆ նախարարը* վերջինիս խորհուրդ տվեց անհապաղ ընտրություններ անցկացնել՝ «ներկա Վարչակարգի իշխանության օրինականացման նպատակով»[15]: Մամուլում այն միտքը տարածվեց, թե, վերջիվերջը, *Արևին* պետք է Թուրքիային, իսկ Թուրքիան՝ *Արևին* [16]: Պատասխան քայլեր ձեռնարկեց նաև Բարուն: Ստամբուլում կայացած զագաթաժողովի ժամանակ վարչապետ Ռասուլ Գուլիմը հայտարարեց, որ աղրբեջանական նավթը դուրս կգա *Միջերկրական* ծով Թուրքիայով և վերջինիս չափաբաժինը կոնսորցիոնում 2,5%-ից «ավելի կինի»[17]:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Հովհանի Վերջերին ԼՂ գորքերը չեզոքացրին Աղդամը, մարտերը սաստկացան Ձերքալիի և Դուբաթիի շրջանների ուղղությամբ: Հովհանի 29-ին ՍՍԿ-ը ընդունեց «հայերի Վերջին հարձակումները դատապարտող» բանաձև[18]: Դարաբաղյան իրադարձությունները պարտադրեցին շահագրգիռ կողմերին աշխուժացնել ջանքերը խաղաղության հաստատման հարցում: ԼՂ Պաշտպանության բանակի ճենքը բերած հաջողությունները ցոյց տվեցին, որ Աղրբեջանը ի վիճակի չէ լուծելու դարաբաղյան կամփոր գենքի ուժով: Թեև Թուրքիայում հնչում էին ռազմաշունչ կոչեր, առկա էին նաև ավելի հավասարակրագած և իրատես տեսակետներ: «Միլյեր»-ը նշում էր, որ դարաբաղյան ների հարձակումը կարելի է կանգնեցնել կամ աղրբեջանցիների ուժեղ հակահարվածով կամ «հայերի և աղրբեջանցիների միջև հաշությամբ»[19]:

Խնդրո առարկայի վերաբերյալ ՀՀ պաշտոնական տեսակետը հայտնեց Վահան Փափազյանը՝ հոկտեմբերի սկզբին ՍՍԿ-ի Գլխավոր Ասամբլեայի աշխատանքների ժամանակ: Նա նշեց, որ «Հայաստանի համար ընդունելի է ԼՂ-ի և Աղրբեջանի միջև հակամարտության կարգավորման խնդրում համաձայնեցված յուրաքանչյուր տարրերակ»[20]: ԼՂ-ի՝ որպես հակամարտության կողմից գաղափարին կտրականապես դեմ հանդես եկավ Թուրքիան, որը պնդեց, թե Դարաբաղյան հակամարտությունը տեղի է ունենում ՀՀ և Աղրբեջանի միջև: Այս հանգամաքրով էլ Թուրքիայի կողմից պայմանագրվեց հայ-թուրքական հարաբերությունների հետագա գործընթացը: Թուրքիայի ԱԳՆ Կովկասյան երկրների հետ հարաբերությունների բանի փոխանօթեն Զանդան Ազերը ՀՀԸՆ «AGBU» ամսագրին տված հարցագրույցում հետևյալ կերպ է բնորոշում թուրքական տեսակետը:

1. Թուրքիայի ճանապարհները կրացվեն Հայաստան առաքվող մարդասիրական օգնության համար, բայց նախևառաջ պատերազմը պետք է ավարտվի, և հայկական ուժերը պետք է դուրս գան Քելբաջարից:
2. Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների արծանագրությունը 95%-ով պատրաստ էր, բայց այդ ուղղությամբ ոչ մի քայլ չի կարող ծեռնարկվել մինչև Դարաբաղյի հարցը չլուծվի:
3. Լեռնային Դարաբաղը աղրբեջանական տարածք է: ԼՂ-ի հայերը կարող են ունենալ որոշակի իրավունքներ, բայց իբրև Աղրբեջանի քաղաքացիներ:
4. Միայն գրավված տարածքներից գործերը հանելով և զինարարելով հնարավոր կինի քննության առարկա դարձնել «հայկական կողմի քողոքները»:
5. Թուրքիան ավելի շատ է անհրաժեշտ Հայաստանին, քան Հայաստանը Թուրքիային: Թուրքիան ուզում է, որ Հայաստանը լինի անկախ, բարգավաճ և բարի դրացի, բայց նախ արյունահեղությունը պետք է դադարեցվի՝ վերը նշված սցենարով[21]:

Այսպիսով՝ Քելբաջարի գրավումից և Դարաբաղյան ճակատում տեղի ունեցած հետագա իրադարձություններից հետո հայ-թուրքական հարաբերություններում սկսվեց մի նոր փուլ: Թուրքիան միակողմանիորեն սառեցրեց Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների և հետագա համագործակցության գործընթացը՝ վերջինիս վերսկսումը պայմանավորելով Դարաբաղի խնդրի լուծման իր ժրագրի հետ: Թուրքիան, երկարուղային և օդային սահմանները փակելով, տնտեսական պատճամիջոցներ ծեռնարկեց ՀՀ նկատմամբ՝ վերջինիս դադարեցումը նույնպես պայմանավորելով Դարաբաղի խնդրի լուծման հետ: Հայկական գորքերի դուրս բերումը աղրբեջանական տարածքներից Դարաբաղի նկատմամբ աղրբեջանական սուվերենության ճանաչումը դարձավ հայ-թուրքական քաղաքական երկխոսության վերականգնման հիմնական նախապայման: Թուրքական մամուլում սկսեցին արծարծել Հայաստան-Թուրքական

## **ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016**

բանվորական կուսակցություն իքր գոյություն ունեցող կապը: Ամենակին էլ չթերագնահատելով հայ-թուրքական հարաբերությունների հաստատումը Հայաստանի համար՝ այդ պահին Անկարայում թերագնահատեցին այդ հարաբերությունների նշանակությունը թուրքիայի համար:

Անկարայի ոչ ճկուն քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ չարդարացրեց իրեն և սկսեց փոխվել՝ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ամրապնդմանը զուգահեռ:

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. «Զումհուրիյեթ» 4 ապրիլի 1993թ. ("Cumhuriyet" 4 Nisan 1993, [https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy\\_page.xhtml?page=4540652](https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy_page.xhtml?page=4540652))
2. "Turkish Daily News" 5 ապրիլի 1993
3. «Զումհուրիյեթ» 4 ապրիլի 1993 ("Cumhuriyet" 4 Nisan 1993, [https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy\\_page.xhtml?page=4540652](https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy_page.xhtml?page=4540652))
4. «Միլլիյեթ» 15 ապրիլի 1993 ("Milliyet" 5 Nisan 1993, <http://gazetearsivi.milliyet.com.tr/> )
5. Նոյն տեղում
6. «Սարահ» 29 հունիսի 1993 ("Sabah" 29 Haziran 1993)
7. Նոյն տեղում
8. «Միլլիյեթ» 30 հունիսի 1993 ("Milliyet" 30 Haziran 1993, <http://gazetearsivi.milliyet.com.tr/> )
9. «Զումհուրիյեթ» 5 հուլիսի 1993 ("Cumhuriyet" 5 Temmuz 1993, [https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy\\_page.xhtml?page=4544140](https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy_page.xhtml?page=4544140))
- 10.«Զումհուրիյեթ» 19 հունիսի 1993 ("Cumhuriyet" 19 Haziran 1993, [https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy\\_page.xhtml?page=4543536](https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy_page.xhtml?page=4543536))
- 11.«Միլլիյեթ» 18 հունիսի 1993 ("Milliyet" 18 Haziran 1993, <http://gazetearsivi.milliyet.com.tr/> )
- 12.Թուրքիան կորցնում էր ՀՀ շահագրգռելու մի լծակ և
- 13.«Միլլիյեթ» 5 հուլիսի 1993 ("Milliyet" 5 Temmuz 1993, <http://gazetearsivi.milliyet.com.tr/> )
- 14.«Երկիր» 28 հուլիսի 1993
- 15.«Սարահ» 6 հուլիսի 1993 ("Sabah" 6 Temmuz 1993)
16. Նոյն տեղում
- 17.«Զումհուրիյեթ» 7 հուլիսի 1993թ. ("Cumhuriyet" 7 Temmuz 1993, [https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy\\_page.xhtml?page=4544241](https://www.cumhuriyetarsivi.com/secure/sign/buy_page.xhtml?page=4544241))
- 18.«Թուրքիե» 30 հուլիս 93.( "Türkiye" 30 Temmuz 1993)
- 19.«Միլլիյեթ» 30 հուլիսի 1993 ("Milliyet" 30 Temmuz 1993, <http://gazetearsivi.milliyet.com.tr/> )
- 20.«Զումհուրիյեթ» 13 հոկտեմբերի 1993 ("Cumhuriyet" 13 Ekim 1993, <http://www.cumhuriyetarsivi.com/monitor/index2.xhtml>)
- 21.«AGBU» նոյեմբեր 1993

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

Թուրքիայի դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ ԼՂ զորքերի կողմից թելքաջարի շրջանի ազատագրումից հետո  
Լուսինե Քերյան

Ղարաբաղյան հակամարտության սկզբից ի վեր Թուրքիան այն որակեց որպես Հայաստան-Ադրբեյջան հակամարտություն՝ չճանաչելով ԼՂ-ը որպես հակամարտության կողմ: Այս հանգամանքով է պատճառարանված թելքաջարի օպերացիայից հետո Թուրքիայի դիրքորոշման կտրուկ փոփոխությունը << նկատմամբ: Թելքաջարի ազատագրումից և Ղարաբաղյան ճակատում տեղի ունեցած հետագա իրադարձություններից հետո հայ-թուրքական հարաբերություններում սկսվեց մի նոր փուլ: Թուրքիան միակողմանիորեն սահեցրեց Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների և հետագա համագործակցության գործընթացը՝ վերջինիս վերսկսումը պայմանավորելով Ղարաբաղի խնդրի լուծման իր ծրագրի հետ:

**РЕЗЮМЕ**

**Позиция Турции по отношению к Армении после освобождения Кельбаджарского района войсками НК  
Лусине Керян**

**Ключевые слова:** Турция, Армения, Азербайджан, армяно-турецкие отношения, Кельбаджар, Карабахский вопрос

Первоначально Турция квалифицировала Карабахский конфликт как конфликт между Арменией и Азербайджаном, не признавая Нагорный Карабах стороной конфликта. Этим обстоятельством и объясняется резкое изменение позиции Турции по отношению к Армении после кельбаджарской операции. После освобождения Кельбаджара и дальнейших событий на карабахском фронте начался новый этап армяно-турецких отношений. Турция в одностороннем порядке заморозила процесс дальнейшего сотрудничества с Арменией, возобновление которого связана с решением карабахского вопроса по своему сценарию.

**SUMMARY**

**Turkey's Position toward Armenia after Liberation of Kelbajar Region by the NK Forces  
Lusine Keryan**

**Keywords:** Turkey, Armenia, Azerbaijan, Kelbajar, Armenian-Turkish relations, the Karabakh issue.

Since the beginning of the Karabakh conflict, Turkey characterized it as a conflict between Armenia and Azerbaijan and didn't recognize Nagorno-Karabakh as a party to the conflict. After Kelbajar operation, critical changes in Turkey's attitudes toward Armenia were conditioned by this very fact. Armenian-Turkish relations entered a new stage after the liberation of Kelbajar region and subsequent events on the Karabakh front. Turkey unilaterally froze relations and future cooperation process with the Republic of Armenia, conditioning the resumption of the last with own program of Karabakh conflict resolution.